

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ ՄԵՐԺԻԿԻ**

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ  
(XIX ԴԱՐԻ ՎԵՐՁ - XX ԴԱՐԻ ՄԿԻՁԲ)**

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՄԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտում

Գլխավորական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Բայբուրդյան Վ. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Մինասյան Է. Գ.

պատմական գիտությունների թեկնածու  
Կոստիկյան Զ. Պ.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 25-ին, ժ. 15.00, ՀՀ ԳԱԱ  
արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի 006 «Համաշխարհային  
պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան,  
Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի  
գլխավորական քարտուղար

պ.գ.թ., դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Թեմայի արդիականությունը

XIX դարավերջին և XX դարասկզբին Իրանի նկատմամբ Ռուսական կայսրության քաղաքականության ուսումնասիրությունն ունի կարևոր գիտական և կիրառական նշանակություն: Թեմայի համակողմանի վերլուծությունն արդիական է ոչ միայն տվյալ ժամանակաշրջանում Իրանի շուրջ ծավալված գործընթացների լուսաբանման, Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական ծրագրերն ու արտաքին քաղաքական օրակարգը վեր հանելու, այլ նաև ժամանակակից միջազգային հարաբերությունների զարգացումները համարժեքորեն գնահատելու համար:

Գրիմի պատերազմում (1853-1856 թթ.) կրած ծանր պարտությունից հետո, Ռուսաստանն իր ուշադրությունը սևեռեց Միջին Ասիային և դաջարական Իրանին (Պարսկաստան): Կայսրության միջինարևելյան քաղաքականությունը քննադատեց որակապես նոր փուլ: Ռուսաստանի ներքափանցումն այդ երկրներ ուներ և՛ ռազմաքաղաքական և՛ տնտեսական բնույթ: Հիմնավորվելով Կասպից ծովում, գրավելով միջինասիական շրջանները և կիրառելով կապիտուլյացիոն համակարգի ողջ գիմանոցը՝ Ռուսաստանն ուժեղացրեց իր տնտեսական և քաղաքական ներգրավածությունն Իրանում: Տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու Ռուսաստանի հավակնությունները բախվեցին նրա վաղեմի հակառակորդ Մեծ Բրիտանիայի հակազդեցությանը: Ռուս-անգլիական հակամարտությունը (պատմագրության մեջ հայտնի է «Մեծ խաղ»՝ “The Great Game” անվամբ) վերաճեց Իրանում գերակայության համար մղվող երկարատև մրցապայքարի:

XX դարասկզբին Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիայի հետ Մեծ Բրիտանիայի մերձեցումը զգալիորեն փոխեց միջազգային հարաբերությունների դինամիկան՝ կանխորոշելով այն գործընթացները, որոնցով պայմանավորվեց նաև Իրանում Ռուսաստանի հետագա քաղաքականությունը: Հակառակորդ կողմերի համար արտաքին քաղաքական առաջնահերթություններ դարձան փոխգիջումային մոտեցումների մշակման ու Իրանում ազդեցության ոլորտների հստակեցման հարցերը՝ Մերձավոր և Միջին Արևելքում Գերմանիայի աճող ազդեցությունը սահմանափակելու և Իրանում ծավալվող Սահմանադրական հեղափոխությունը կանխելու նպատակով: 1907 թ. Միջին Արևելքն, այդ թվում Իրանն, ազդեցության գոտիների բաժանելու անգլո-ռուսական համաձայնագրի կնքումով այդ երկրների հարաբերությունները ստացան աշխարհառազմավարական համագործակցության բովանդակություն: Առաջին աշխարհամարտից առաջ այն ընդլայնեց անգլո-ֆրանսիական միությունը՝ հիմք դնելով Եռյակ համաձայնության կազմավորմանը: Ռուսաստանը վերածնակեցրեց իր արտաքին քաղաքականության իրանական ուղենիշը՝ փորձելով այն համապատասխանեցնել նոր աշխարհաքաղաքական իրողություններին: Թեև համաձայնագիրը դիտվում էր որպես իրանական խնդրի կարգավորման առավել արդյունավետ տարբերակ և ենթադրում էր Իրանում նրանց խաղաղ համակեցությունը՝ փոխադարձ զիջումների քաղաքականության կիրառելիությամբ, սակայն թե՛ Մեծ Բրիտանիան, թե՛ Ռուսաստանն աշխատում էին պահպանել իրենց դիրքերը՝ հետագայում բարենպաստ իրավիճակի պայմաններում դրանք ի հաշիվ հակառակ կողմի ուժեղացնելու նպատակով:

Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի միջև մրցակցությունն Իրանում դրսևորվում էր միմյանց դիմակայելու սկզբունքայնությամբ և ընթանում էր փոփոխական հաջողությամբ:

Իրանի ռազմավարական նշանակության ճանապարհները վերահսկելու, այդ երկրի բնական պաշարները, արտահանման և հումքային շուկաները շահագործելու գերտերությունների նկրտումները պայքերաբար հանգեցրել են նրանց միջև սուր հակամարտությունների ձևավորմանը: Այսօր էլ տարածաշրջանում ազդեցության ոլորտների համար մղվող պայքարը կարելի է որակել որպես նոր «Մեծ խաղ»՝ զուգահեռներ անցկացնելով հարյուրամյա վաղեմության իրադարձությունների և մերօրյա իրողությունների միջև: Իրանը երբեք չի կորցրել կարևոր դերակատարումն ու նշանակությունը Ռուսաստանի և Արևմտյան տերությունների համար: Վերջինները մշտապես շահագրգռված են տարածաշրջանում Ռուսաստանի դիրքերի թուլացմամբ: Աշխարհաքաղաքական ներկայիս իրադրության պայմաններում պատմական նախադեպերի համակողմանի և անկողմնակալ ուսումնասիրությունը նպաստում է տարածաշրջանում ձևավորված հակամարտությունների խորքային մեկնությանը: Այս համատեքստում թեմայի արդիականությունը պայմանավորված է պատմական փորձի արժևորմամբ:

Սույն աշխատության արդիականության հարցը կարևորվում է նաև ՀՀ արտաքին քաղաքական կարևորագույն գործընկերներ՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պատմության մոտ շրջանի՝ արտաքին հարաբերությունների և տնտեսական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ և առնչվում է այդ երկրների տնտեսական, հասարակական-քաղաքական կառուցվածքի մաս կազմող մեծաքանակ հայկական համայնքների պատմության մի շարք հանգուցային հարցերի քննությանը:

### **Աշխատանքի նպատակներն ու խնդիրները**

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել Իրանի նկատմամբ իրականացվող Ռուսական կայսրության քաղաքականության օրինաչափությունները, փուլային զարգացումները, միտումներն ու իրականացված ծրագրերը: Այդ նպատակով մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել Իրանի ռազմավարական դերն ու նշանակությունը Ռուսական կայսրության արտաքին քաղաքական օրակարգում: Այդ երկրում գերակայության հաստատման ճանապարհին կիրառված տնտեսական և քաղաքական լծակների ձեռք բերման գործընթացի հիմնական նշանակությունը, միտումներն ու հետևանքները:

2. Արխիվային նյութերի հենքի վրա՝ ուսումնասիրել իրանական խնդրում Ռուսական կայսրության և գերտերությունների միջև հակազդեցությունների խորացման, նպատակների անհամատեղելիության պատճառները, ռուսական դիվանագիտության ռազմավարությունը:

3. XX դարակազմի ձևավորված աշխարհաքաղաքական բեկումնային զարգացումների համատեքստում լուսաբանել Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության ուղեծրում ի հայտ եկած նոր մարտահրավերների և հայեցակարգային մոտեցումների փոփոխման

անհրաժեշտության պատճառները, որոնք պայմանավորեցին մաս Իրանում կայսրության հետագա քաղաքականությունը:

4. Ներկայացնել իրանական խնդրում ռուս-անգլիական հարաբերությունների՝ «դիմակայությունից փոխհամաձայնություն» հայեցակարգի անցման գործընթացային փուլերը, կողմնակի գործոնների ազդեցությունները:

5. Վերլուծել 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի բանակցային գործընթացում իրանական գործոնի դերակատարման կարևորությունը:

6. Մեկնաբանել Իրանում Սահմանադրական հեղափոխության հետևանքով ստեղծված քաղաքական մոր իրավիճակի ուղղությամբ ցարական կառավարության քայլերը:

7. Համալիր ուսումնասիրության ենթարկել Իրանի Սահմանադրական հեղափոխության ընթացքում ռուսական ռազմական ներխուժման պատճառները և փաստարկված ներկայացնել դրա արդյունքները:

8. Համադրելով և՛ ռուսական արխիվային փաստաթղթերը, և՛ տարաբնույթ աղբյուրներում ներկայացված մտտեցումները, վերլուծության ենթարկված փաստերն ու տեղեկությունները՝ ներկայացնել Իրանի Սահմանադրական շարժմանը Ռուսական կայսրության ռազմաքաղաքական միջամտության ամբողջական պատկերը:

9. Սահմանադրական հեղափոխությանը ռուսական միջամտության համատեքստում նորովի քննության ենթարկել հեղափոխության մասնակից հայ քաղաքական գործիչների, կուսակցությունների մասնակցության իրական պատճառներն ու հետևանքները, որոնք ուղղակի շրջանցվել, երբեմն էլ ոչ պատշաճ գնահատականի են արժանացել խորհրդային պատմագրության կողմից:

### **Ատենախոսության գիտական նորույթը**

Խորհրդային և արևմտյան պատմագրության ուսումնասիրությունների շարքում թեմայի վերաբերյալ կան մեղ խնդիրներին առնչվող առանձին հաջողված աշխատություններ, որոնցում արծարծվել են կարևոր հարցադրումներ և հիմնախնդիրներ: Չնայած շատ հաճախ հանդիպող գաղափարայնացված և հսկասական գնահատականների, դրանք անվիճելի կարևորություն են ներկայացնում: Մակայն ժամանակը թելադրում է ավելի խորը և համալիր ուսումնասիրությունների անհրաժեշտություն՝ անցյալի պատմական փորձը ներկա իրողությունների հետ զուգադրելու տեսանկյունից: Ատենախոսությունում արխիվային լայնածավալ նյութերի, մեզանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված վերլուծական գրականության հիման վրա ուսումնասիրվել են քննվող ժամանակաշրջանում ռուս-իրանական հարաբերությունների քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ասպեկտները՝ լրացնելով հետխորհրդային հայ իրանագիտության բացթողումները: Մույն ատենախոսությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով XIX դ. վերջին և XX դ. սկզբին Իրանի նկատմամբ Ռուսական կայսրության վարած քաղաքականությունն ամբողջական և համակարգված ներկայացնելու փորձ է: Հետազոտությունը չի հավակնում վերջնական պատասխաններ տալ թեմայի հանգուցային բոլոր հարցերին: Այն նոր մտտեցումներով, հիմնավորված փաստարկներով պատմական կարևորագույն իրողությունները վերագնահատելու փորձ է:

### **Ատենախոսության ժամանակագրական սահմանները**

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XIX դ. վերջի և XX դ. սկզբի ժամանակաշրջանը: Ժամանակագրության սկիզբը XIX դարավերջին Իրանում Ռուսական կայսրության գերակայության հաստատման գործընթացն է, երբ ռուսական կառավարությունը միջինարևելյան արտաքին քաղաքական օրակարգ մտցնելով Իրանում աճող Մեծ Բրիտանիայի ազդեցությանը դիմակայելու խնդրի կարևորությունը՝ ընդլայնեց իր քաղաքական և տնտեսական ներգրավածությունն Իրանում: Ժամանակագրական սահմանն ընդգրկում է Իրանի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության վերլուծությունը մինչև 1912 թ. ներառյալ: Ժամանակագրական նման սահմանների ընտրությունը պայմանավորված է Իրանի Սահմանադրական հեղափոխությանը ռուսական ռազմաքաղաքական միջամտության գործընթացն ավելի ամբողջական ու ավարտուն ներկայացնելու անհրաժեշտությամբ: Աշխատանքն ամփոփվում է Առաջին աշխարհամարտից առաջ և պատերազմի տարիներին Իրանի շուրջ ձևավորված իրադրության քննությամբ:

### **Ատենախոսության մեթոդաբանական հիմքը**

Աշխատանքի մեթոդաբանական հիմքում ընկած են պատմավերլուծական, պատմաքաղաքագիտական քննության մեթոդները: Իրանում Ռուսական կայսրության քաղաքականությունը դիտարկվել է գնահատողական մոտեցմամբ: Ելնելով հետազոտության թեմայի բազմաշերտ ու բազմակողմ բնույթից՝ աշխատանքում օգտագործվել են աղբյուրագիտական նյութի քննական վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրման ուսումնասիրությունը, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել իրադարձությունները դիտարկել ոչ թե առանձին, այլ մեկ ամբողջության՝ ժամանակային և դիալեկտիկական կապի մեջ:

### **Աշխատանքի կիրառական նշանակությունը**

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կարող են հիմք դառնալ Ռուսական կայսրության և Իրանի նոր պատմության առանձին հիմնախնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև թեմային առնչվող հետագա հետազոտությունների համար, կիրառվել դասախոսություններում և քաղաքագիտական ուղղվածությամբ հատուկ դասընթացներում: Սույն թեմայի ուսումնասիրությունը գործնական կարևորություն ունի ներկայիս տարածաշրջանային խնդիրների և զարգացումների գնահատման ու վերլուծության համար:

### **Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը**

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, Երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովներում ներկայացված զեկույցներում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի կողմից:

### **Սկզբնաղբյուրների ու գրականության համառոտ տեսություն:**

Աշխատանքը կատարվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն ու պարսկերեն լեզուներով՝ տարաբնույթ աղբյուրների, տեղեկատվական և վերլուծական գրականության հիման վրա: Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվի ֆոնդերում պահվող փաստաթղթերը, տարատեսակ փաստագրական նյութերը, որոնք կազմվել են Իրանում ռուսական դիվանագիտական և ռազմական առաքելությունների ներկայացուցիչների կողմից և մանրամասն տեղեկություններ են պարունակում այդ երկրի վերաբերյալ<sup>1</sup>: Աշխատանքում օգտագործվել են ռուսական հատուկ գործակալության ռազմատեղեկատվական, ռազմավարական բնույթի նյութեր, որոնք ներառում են Իրանի տարածքային, ռազմական ներուժի, ներքաղաքական իրավիճակի մասին տեղեկություններ<sup>2</sup>: Աշխատանքի աղբյուրագիտական հենքն են Ռ-Ղ-ԱԳ-նախարարությանը կից՝ Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի՝ ցարական արտաքին գերատեսչության Իրանին վերաբերող գործերը, որոնք պարունակում են Իրանում ռուսական դիվանագիտական առաքելության և ռուսական արտաքին գերատեսչության միջև նամակագրական հարուստ նյութ՝ հաղորդագրությունների, զեկույցների և հաշվետվությունների տեսքով<sup>3</sup>: Դրանք Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի հետ մրցակցության, Իրանում Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ներգրավածության, ֆինանսական ներդրումների, հայեցակարգային առաջարկների, ազդեցության գոտիներին վերաբերող նյութեր են: Արժեքավոր տեղեկություններ կան նաև 1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական հեղափոխության ընթացքի և Առաջին աշխարհամարտին մախրողած իրադարձությունների վերաբերյալ<sup>4</sup>, որոնց համար լրացուցիչ աղբյուր են ռուսական կառավարության «Իրանական հարցերով Հատուկ խորհրդակցության» մատյանները<sup>5</sup>: Նկատենք, որ փաստաթղթերի մի մասը հրատարակվել է «Պարսկաստանի իրադարձություններին վերաբերյալ դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուում»<sup>6</sup>, յոթ պլակով դեռևս 1911-1913 թթ.: Օգտագործվել են նաև Ռուսաստանի և արևմտյան տերությունների՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում վարած քաղաքականության վերաբերյալ բոլշևիկյան կառավարության հրապարակած «Միջազգային հարաբերությունները իմպերիալիզմի դարաշրջանում»<sup>7</sup> փաստաթղթերի

<sup>1</sup>РГВИА (Российский государственный военно-исторический архив), Ф. 446, “Коллекция Военно-ученного архива “Персия””, оп. 1, д. 39, д. 47, д. 48, д. 49, д. 52, д. 53.

<sup>2</sup>РГВИА, Ф. 2000, “Главное управление Ген. Штаба, отдел генерал-квартирмейстра”, оп. 1, д. 1022 (1), д. 1022 (2), д. 1022 (3), д. 1022 (4), д. 1032.

<sup>3</sup>АВПРИ (Архив внешней политики Российской Империи), Ф. 144, “Персидский стол”, оп. 488, д. 603, д. 3836, Ф. 144, “Персидский стол Б”, оп. 489, д. 5776.

<sup>4</sup>АВПРИ, Ф. 144, “Персидский стол”, оп. 488, д. 4064, д. 4087, д. 4453, д. 4087, д. 2994.

<sup>5</sup>АВПРИ, Ф. 144, “Персидский стол”, оп. 488, “Журналы особых совещаний по персидским делам”, д. 2291-2298.

<sup>6</sup>Сборник дипломатических документов, касающихся событий в Персии, выпуск 1-7, С. Петербург, 1911-1913.

<sup>7</sup>Международные отношения в эпоху империализма: документы из архивов царского и временного правительств 1900-1913 гг., серия 2, т. 18, ч. 1, 2, т. 19, ч. 1, 2, М., 1938-1939.

ժողովածուի երկրորդ շարքի և «Կարմիր արխիվ»<sup>8</sup> պարբերականի հատորները: Որպես լրացուցիչ աղբյուրներ օգտագործվել են նաև հրատարակված բրիտանական փաստաթղթերի ժողովածուները<sup>9</sup> և Հայաստանի ազգային արխիվի նյութերը<sup>10</sup>:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել պայմանագրերի ժողովածուներում հրապարակված ռուս-պարսկական, անգլո-ռուսական, անգլո-պարսկական միջպետական պայմանագրերը, որոնք որոշիչ դերակատարում են ունեցել Ռուսական կայսրության Իրանի նկատմամբ իրականացվող քաղաքական գործընթացներում<sup>11</sup>: Տեղեկատվական կարևոր սկզբնաղբյուրներ են ռուս-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների վիճակագրական, պաշտոնական-տեղեկատվական, Իրանի մաքսային, ճանապարհահաշիմության ոլորտների, զինված ուժերի վերաբերյալ մի շարք արժեքավոր հետազոտություններ<sup>12</sup>: Ատենախոսության համալիր քննության և Իրանում Սահմանադրական հեղափոխության շրջանում տեղ գտած իրադարձությունները լիարժեք ընկալելու նպատակով ուսումնասիրվել են Իրանի առաջին Սահմանադրությունը (1906 թ.) և Սահմանադրության լրացումները (1907 թ.)<sup>13</sup>: Արժեքավոր սկզբնաղբյուրներ են նաև իրադարձություններին անմիջական մասնակիցների և ակնատեսների հուշերը և աշխատությունները: Դրանցից են՝ Ռուսաստանի արտգործնախարարներ Բ. Բզվոլսկու և Ս. Սազոնովի, ֆինանսների նախարար

---

<sup>8</sup>«Англо-русское соперничество в Персии», т. 1 (56), 1933; «К истории англо-русского соглашения 1907 г.», т. 2-3, (69-70), 1935; «К истории Потсдамского соглашения 1911 г.», т. 3 (58), Центральный Архив РСФСР, Исторический журнал «Красный Архив», М., 1933.

<sup>9</sup> British Documents on the Origins of the War, The End of British Isolation, Edited by G. P. Gooch, D.Litt., F.B.A., and Harold Temperley, Litt.D., F.B.A., Vol. I, F.O. Russia, N 18, L., 1927; British Documents on the Origins of the War, Edited by G. P. Gooch, D.Litt., F.B.A., and Harold Temperley, Vol. III, The Testing of the Entente 1904—6, Appendix A, L., 1928.

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 3, 5, 27, 19, 20, 68; ֆ. 1457, ց. 1, գ. 45:

<sup>11</sup> Collection of Treaties, Engagements and Sanads. Relating to India and Neighbouring Countries; Compiled by C.U. Aitchison, Vol. X, The Treaties, etc. Relating to Persia and the Persian Gulf, Calcutta, 1892; Collection of Treaties, Engagements and Sanads: Relating to India and Neighbouring Countries, Compiled by C.U. Aitchison, Vol. XIII, Calcutta, 1933; Договоры России с Востоком, политические и торговые, собрал и издал Т. Юзефович, СПб, 1869; Сборник договоров России с другими государствами 1856-1917гг., под редакцией Е.А. Адамова, М., 1952; Сборник торговых договоров и других вытекающих из них соглашений, заключенных Россией и иностранными государствами, под редакцией Н., Верховского, Петроград, 1915; Зоннештраль-Пискорский А., Международные торговые договоры Персии, М., 1931.

<sup>12</sup> Бобынин Н., Персия, ее экономическое положение и внешняя торговля 1901-1923, Тифлис, 1923; Томара М., Экономическое положение в Персии, СПб., 1895; Медведев А., Персия. Военно-статистическое обозрение, С.Петербург, 1909; Geoffrey Drage, Russian Affairs, N.Y., L., 1904; The Economic History of Iran 1800-1914, Edited by Ch. Issawi, Chicago and London, 1971.

<sup>13</sup> The Fundamental Law of December 30, 1906, The Supplementary fundamental Laws of October 7, 1907, A Brief Narrative of Recent Event in Persia, Followed by a Translation of “The Four Pillars of the Persian Constitution”, trans. by Ed. Brown, L., 1909; Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East, Collected by Helen M. Davis, Durham 1953.



Յ.Վիտտեի, ականավոր ռուս դիվանագետ Ի. Ջինովկի, Ռուսաստանում քրիստոնական առաքելության ղեկավար Ջ. Բյուքենենի հուշերը<sup>14</sup>, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ջ. Քերզոնի (1919-1924 թթ.), Վ. Չիրոլի, Հ. Վիգհամի, Իրանում ամերիկացի ֆինանսական խորհրդակալ Մ. Շուաբերի աշխատությունները<sup>15</sup>: Առանձնակի կարևորություն է ներկայացնում 1907-1914 թթ. անչափահաս թագաժառանգ Ահմադ միրզայի (1909 թ. շահ հռչակված) ռուս դաստիարակ Կ. Սմիրնովի արխիվացված ձեռագիր հուշերը, զեկույցները, փաստաթղթերը, որոնք 2002 թ. առաջին անգամ տպագրվել են «Պարսից շահի դաստիարակի գրառումներ» խորագրով գրքում, որտեղ լուսաբանվում են Իրանի հասարակական-քաղաքական, արքունական կյանքի առանցքային շատ իրադարձություններ<sup>16</sup>: Առանձնակի կարևորություն են ներկայացնում 1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական հեղափոխության շրջանում գրված պարսկալեզու աշխատությունները, որոնցից առանձնացրել ենք՝ Ահմադ Քասրավիի, Նեզամ ալ-Էսլամ Քերմանիի աշխատությունները<sup>17</sup>:

Ատենախոսության թեմայի վերաբերյալ հետազոտությունները և վերլուծական գրականությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբի ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են Իրանում ռուս-անգլիական հակամարտության, իրանական խնդրում Ռուսական կայսրության, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի հետ հարաբերությունների դիվանագիտական պատմությանը, աշխարհաքաղաքական հարցերի քննությանը: Երկրորդ՝ Իրանում Ռուսական կայսրության տնտեսական և քաղաքական ներգրավածության հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններն են: Երրորդ՝ Իրանի նոր շրջանի պատմության և 1905-1911 թթ. Սահմանադրական հեղափոխության հարցերի վերաբերյալ վերլուծություններն են:

Իրանի պատմության վերաբերյալ արժեքավոր հետազոտություններ են հայ ականավոր իրանագետ Վ. Բայբորդյանի աշխատությունները<sup>18</sup>: Միջազգային հարաբերությունների համակարգում Ռուսաստանի և զերտերությունների հարաբերություններին, ռուսաց դիվանագիտության հիմնահարցերին է նվիրված հայ պատմաբաններ Մ. Մուրադյանի և Է.

<sup>14</sup>Извольский А. П., Воспоминания, М., 1989; Сазонов С.Д., Воспоминания, Минск, 2002; Витте С.Ю., Воспоминания. Царствование Николая II, 2-е издание, Л., 1924; Зиновьев И.А., Россия, Англия и Персия, С. Петербург, 1912; G. Buchanan, My mission to Russia and other Diplomatic Memories, L., N. Y., 1923.

<sup>15</sup>Curzon G.N., Persia and the Persian Question, vol. I, II, L., 1966; Chirol V., The Middle Eastern Question or some Political Problems of Indian Defence, L., 1903; Whigham H. J., The Persian Problem: An Examination of the rival positions of Russia and Great Britain in Persia with Some Account of the Persian Gulf and Bagdad Realway, L., 1903; Shuster M., The Strangling of Persia, N. Y., 1912.

<sup>16</sup>Смирнов К.Н., Записки воспитателя персидского шаха: 1907-1914 годы (с приложениями), Подготовил рукопись для публикации Н.К. Тер-Оганов, Тель-Авив, 2002.

<sup>17</sup>، ۱۳۷۷، ناظم الاسلام كرماني، تاريخ بيداری ايرانين، بخش اول، بخش دوم، چاپ پنجم، تهران

۱۳۷۹، احمد كسروی، تاريخ مشروطه ايران، با پیشگفتاری از رحيم رضازاده مليگ، چاپ سوم، تهران

<sup>18</sup>Բայբորդյան Վ., Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XI, Եր., 1982, Բայբորդյան Վ., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914 թթ.), Եր., 1974, Բայբորդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2005:

Մինասյանի արժեքավոր հետազոտությունը<sup>19</sup>: Այս հարցերի քննությանը նախատել են նաև խորհրդային հեղինակներ՝ Գ. Բոնդարևսկու, Ի. Բետտուժևի, Ա. Օստապցևայի, Ա. Իզմատևի, Ի. Աստաֆևի, Վ. Խվոստովի, Պ. Եֆրեմովի<sup>20</sup>, Պ. Մուլտատովիի աշխատությունը և ակադեմիական մի շարք նոր հրատարակություններ<sup>21</sup>: Ժամանակակից ռուս հեղինակներից առանձնացրել ենք Բ. Կազարիտցկու «Ճայրամասային կայսրություն. Ռուսաստանը և աշխարհամակարգը» աշխատությունը<sup>22</sup>: Հետաքրքրություն են ներկայացնում արևմտյան դպրոցի իրանցի հետազոտողներ Ֆ. Քազենձադեհի, Շ. Շահնավազի մենագրությունները<sup>23</sup>: Կարևոր են նաև Ջ. Ալբերտ Ուայթի, Ջ. Սիեզայի, Ֆ. Հանսլիի խմբագրությամբ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյի արտաքին քաղաքականությանը նվիրված հոդվածների ժողովածուում հրատարակված հետազոտությունները<sup>24</sup>:

Իրանում Ռուսական կայսրության տնտեսական և քաղաքական ներգրավածության հիմնախնդիրների համակողմանի վերլուծության համար առանձնացրել ենք խորհրդային և արևմտյան մի շարք հեղինակների հետազոտությունները: Իրան ռուսական կապիտալների արտահանման պատմությանն է նվիրված Բ. Ամանիչի արխիվային փաստաթղթերով գրված

---

<sup>19</sup> Մուրադյան Մ., Մինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Եր., 2005:

<sup>20</sup> Бондаревский Г., “Персидский Залив и Англо-русское соглашение 1907 г.; Проблема проливов”, Россия и персидский залив”, Спец. бюлетьень, N 44, ч III, М., 1964; Бондаревский Г., Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток (1888-1903), Ташкент, 1955; Бондаревский Г., Английская политика и международные отношения в Бассейне Персидского Залива, (конец XIX-начало XX в.) М., 1968; Бесгужев И., Борьба в России по вопросам внешней политики 1906-1910, М., 1961; Остальцева А., Англо-русское соглашение 1907 года. Влияние Русско японской войны и революции 1905-1907 годов на внешнюю политику царизма и на перегруппировку европейских держав, Саратов, 1977; Игнатъев А., Внешняя политика России в 1905-1907 гг. М., 1986; Игнатъев А., Русско-английские отношения накануне первой мировой войны (1908-1904 гг.), М., 1962; Астафьев И., Русско-германские дипломатические отношения (от Портсмутского мира до Потсдамского соглашения), М., 1976. Хвостов, В.М, История дипломатии; Дипломатия в новое время (1871-1914), Т. II, М, 1963; Ефремов П., Внешняя политика России 1907-1914, М., 1961.

<sup>21</sup> Мульгагули П., Внешняя политика Императора Николая II (1894-1917), М., Фив, 2013; История внешней политики России конец XIX- начало XX века, (от русско-французского союза до Октябрьской революции), Сахаров А., Игнатъев А., Тютохин С., М. 1997, История внешней политики России; Вторая половина XIX в., Золотухин М., Мелихов Г., Рыбаченко И., М., 1997.

<sup>22</sup> Kagarlitsky B., Empire of the Periphery, Russia and the World System, L., 2008.

<sup>23</sup> Firuz Kazem-Zadeh, Russian and Britain in Persia, 1864-1914. A study of Imperializm, New Haven, L., 1968; Shahbaz Shahnavaz, Britain and the opening up of South-West Persia 1880-1914, A study in imperialism and economic dependence, London and N.Y., 2005.

<sup>24</sup> John Albert White, Transition to Global Rivalry, Alliance Diplomacy and the Quadruple Entente, 1895-1907, Cambridge, 1995; Jennifer Siegel, Endgame: Britain, Russia and the Final Struggle for Central Asia, London and N. Y., 2002; British Foreign policy under Sir Edward Grey, Ed. by Hinsley F.H., L., N. Y., Melbourne, Cambridge University Press, 1977:

աշխատությունները, Լ. Կուլագինայի հետազոտությունները<sup>25</sup>: Հատկապես հաջողված են արևմտյան հեղինակներ Մ. Էնտների, Պ. Ուալդրոնի հետազոտությունները, որոնք հարուստ են փաստագրական նյութով և խորը վերլուծություններով<sup>26</sup>: Ուշադրության են արժանի Պարսկական կազակական բրիգադի կազմավորման պատմությանը և գործունեությանը նվիրված Օ. Կրասնյակի, Ն. Ռիխսևի, Մ. Վիբրնովի և Ս. Քրոնինի հետազոտությունները<sup>27</sup>: Թեև որոշակի կողմնակալ մտտեցումներով, սակայն արխիվային փաստաթղթերի բազայով կարևոր տեղեկատվական արժեք է ներկայացնում Պ. Ստրեյանովի (Կալաբուխով) 2007 թ. աշխատանքը, որը նվիրված է 1909-1911 թթ. Իրան ռուսական ներխուժման ընթացքում այնտեղ գործողված ռուսական ռազմական գորամիավորումների թվաքանակի և տեսակների հարցերին<sup>28</sup>:

1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական հեղափոխությանը և այդ շարժմանը հայերի մասնակցության վերաբերյալ խնդիրների քննությանն են նվիրված հայ պատմաբաններ Հ. Բերբերյանի, Եր. Աբրահամյանի, Հ. Սիմոնյանի<sup>29</sup>, հայ հեղափոխական կուսակցությունների պատմագիրներ Ա. Կիտուրի, Ս. Վարանդյանի և Եփրեմ խանի կենսագիր Հ. Էլմարի աշխատությունները<sup>30</sup>: Ատենախոսությունում Իրանի Սահմանադրական շրջանի վերաբերյալ տարբեր հարցերի մեկնաբանությանը մեծապես նպաստել են Ջ. Արաբաշյանի, արևմտյան դպրոցի իրանցի հեղինակներ Ջ. Աֆարիի, Խ.

---

<sup>25</sup>Ананьич Б., Российское самодержавие и вывоз капиталов 1895-1914 гг., (по материалам Учетно-судного банка Персии), Л., 1975; Ананьич Б., Россия и Международный капитал, 1897-1914, Очерки истории финансовых отношений, Л., 1970; The Russian economy and banking system, Boris Ananich, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol. II, Ed. By Dominic Lieven, London School of Economics and Political Science, 2006; Кулагина Л., Россия и Иран (XIX-началоXX вв.), М., 2010; Кулагина Л., К Истории Русско-иранских отношений, Иран. История, экономика, культура, М. 2009.

<sup>26</sup>Marvin L. Entner, Russo-Persian Commercial relations, 1828-1914, University of Florida Monographs, Social Sciences, Florida, No. 28, 1965; Peter Waldron, State finances, The Cambridge History of Russia, Imperial Russia, 1689-1917, vol.II, Ed. By Dominic Lieven, 2006.

<sup>27</sup>Красняк О., Становление иранской регулярной армии в 1879-1921гг., По материалам архивов русской военной миссии, М., 2007; Выборнов М., Персия и ее вооруженные силы, М.- Л.,1928; Рихсиева Н., К истории иранских казачьих частей (по архивным материалам) Востоковедение (литературоведение, история), сборник научных трудов N 564, Ташкент; Stephan Cronin, Building a New Army: Military Reforms in Qajar Iran, War and Peace in Qajar Persia, Implication Past and Present, Ed. by R. Farmanfarmanian, History and Society in the Islamic world, USA&Canada, 2008.

<sup>28</sup>Стрелянов (Калабухов) П., Казаки в Персии 1909-1918, М., 2007.

<sup>29</sup>Berberian H., Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911: The Love for Freedom Has No Fatherland, Westview Press, 2001; Abrahamian Er., Iran between Two Revolutions, Princeton, Princeton, New Jersey, 1982; Abrahamian Er., A History of Modern Iran, Cambridge University Press, 2008, Միմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Եր., 2003, գիրք III, Եր. 2009:

<sup>30</sup>Էլմար Հ. (Հովսեփ Հովհաննիսյան), Եփրեմ, Թեհրան, 1964, Կիտուր Ա., Պատմություն Ս.Դ. Հնչակեան Կուսակցության, հ. Ա, Պէրոս, 1962, Վարանդյան Մ., Հ.Յ.Դաշնակցության Պատմություն, հ. Ա, Թեհրան, 1981:

Չաբերիի, Ռ. Դոդաի, Մ. Բոնադարյանի հետազոտությունները<sup>31</sup>: Ուշադրության են արժանի նաև Ա. Լամբթոնի, Նիքի Քեդդիի, Ռ. Մաքդանիելի, Ջ. Բլաքբի աշխատությունները<sup>32</sup>, ինչպես նաև խորհրդային հետազոտող Մ. Իվանովի և հետխորհրդային շրջանում լույս տեսած Ե. Դորոշենկոյի ուսումնասիրությունները<sup>33</sup>:

### **Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք իրենց հերթին բաժանվում են 8 ենթագլուխների), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից:

**Ներածության** մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և թեմայի ժամանակագրական և սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«ՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ»** բաժանվում է երեք ենթագլխի:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է **«Ռուս-իրանական սահմանների ձևավորումը և Իրանի դերը Ռուսաստանի միջինարևելյան քաղաքականության մեջ»**, համառոտ ամրադարձ է կատարվում XIX դ. ռուս-իրանական սահմանի ձևավորման գործընթացին: Ներկայացվում է Ռուսաստանի համար Իրանի ուրույն ռազմավարական նշանակությունը:

XIX դ. Ռուսական կայսրության հարավային սահմանների անվտանգության ապահովման և արևելյան շուկաներ ուղիներ հարթելու հիմնահարցերը դարձան կայսրության արտաքին քաղաքական ուղեծրի առաջնահերթություններ, որոնց կենսագործման համար Ռուսաստանն անցավ

---

<sup>31</sup> Арабаджян З., Иран. Власть, реформы, революции (XIX-XX вв.), М., 1991; Afary J., Social Democracy and the Iranian Constitutional Revolution of 1906-1911, A Century of Revolution Social Movements in Iran, Social movements, Protest and Contention, vol. 2, ed. J. Foran, Minneapolis, 1994; Afary J., The Iranian Constitutional revolution: Grassroots Democracy, Social Democracy, and the Origins of feminism, N. Y., 1996; Afary J., Armenian Social Democrats, the Demokrat Party of Iran, Reformers and Revolutionaries in Modern Iran, New Perspectives on the Iranian left, ed. Stephanie Cronin, N.Y., 2004; Chaqueri C., Introduction to the Armenians of Iran: A Historical Persual, The Armenians of Iran, The paradoxical of a Minority in a Dominant Culture: Articles and Documents, ed. by Chaqueri C., Cambridge, Massachusetts, 1998; Годс Реза М., Иран в XX веке. Политическая история, (перевод с английского Дижуря И.М.), М., 1994; Bonakdarian Mansour, Britain and Iranian Constitutional Revolution 1906-1911; Foreign Policy, Imperialism and Dissent, N. Y., 2006.

<sup>32</sup> Lambton A., Qajar Persia, Eleven Studies, L., 1987; Keddie R. Nikki, Iran, Religion, Politics & Society, Collected Essays, L., 1980; Keddie Nikki, Yann Richard, Roots of Revolution: An Interpretive History of Modern Iran. New Haven, 1981; James D. Clark, The Constitutional movement and Russian intervention in Tabriz 1907-1911, Iranian-Russian encounters, Empires and revolutions since 1800, Ed. By Stephanie Cronin, N. Y. 2013.

<sup>33</sup> Иванов М., Иранская революция 1905-1911 годов, М., 1957; Дорошенко Е., Шитское духовенство в двух революциях 1905-1911 и 1978-1979 гг., М., 1998.

տարածքային ձեռքբերումների նախ Անդկովկասում, ապա նաև Միջին Ասիայում: XIX դարավերջին Ռուսական կայսրությունն առաջին անգամ մոտեցավ ընդհուպ Իրանի հյուսիս-արևելյան շրջաններին և բրիտանական ազդեցության ոլորտում գտնվող Աֆղանստանին՝ դրանով հիմք դնելով Հնդկաստանի համար «ռուսական սպառնալիքին»: Միջին Ասիայի Ռուսաստանին բռնակցմամբ ռուս-անգլիական հակասությունների բովանդակությունն ընդլայվեց, քանզի Ռուսաստանին հաջողվեց վիճարկել տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի գերկայությունը: Իրանում ռուս-բրիտանական խորացող հակամարտությունը հնարավորինս կարգավորվեց 1888 թ. ձեռք բերված պայմանավորվածությամբ, որով Ռուսաստանն ու Մեծ Բրիտանիան պարտավորվեցին հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը: Իրանը վերածվեց այդ երկու պետությունների միջև միջանկյալ (բուֆերային) գոտու, որից հետո ռուս-անգլիական դիմակայությունն Իրանում հիմնականում ընթանում էր տնտեսական մրցակցության հունով: 1893 թ. ավարվեց ռուս-իրանական սահմանի ձևավորման գործընթացը, որով այդ պետությունները սահմանակից դարձան ոչ միայն Կովկասում, այլև Կասպից ծովից արևելք ընկած շրջաններում: Ռուսական կառավարությունը Միջին Արևելքում տարածքային նվաճումների քաղաքականությունից անցավ տնտեսական ներթափանցման քաղաքականության, որն ուղեկցվում էր պետության հովանավորական միջոցառումներով: Ռուսաստանը շահագրգռված էր Իրանի հետ դրացիական հարաբերությունների պահպանման հարցում՝ ցանկանալով շահական կառավարությունից ստանալ այնպիսի մենաշնորհային իրավունքներ, որոնցից օգտվում էր Մեծ Բրիտանիան: Նման մարտավարությունը կարևորվում էր ռուս-անգլիական հակամարտությունը չխորացնելու տեսանկյունից և ապահովում էր ռուս-իրանական սահմանի անվտանգությունը՝ ազատելով սահմանագծին մեծաքանակ գործ կենտրոնացնելու անհարաժեշտությունից:

Երկրորդ՝ **«Ռուսական կայսրության առևտրատնտեսական շահերն Իրանում»** ենթագլխում մանրամասն վերլուծության են ենթարկվել այն տնտեսական քաղաքիչները, որոնցով պայմանավորվեց Ռուսական կայսրության ներթափանցումն Իրան: Այստեղ հիմնավորվում են Իրանում Ռուսաստանի գերակայության հաստատման ճանապարհին տնտեսական և քաղաքական լծակների ձեռք բերման գործընթացի հիմնական նշանակությունը, միտումներն ու արդյունքները: Լուսաբանվում են Իրանում ձևավորված սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի հիմնահարցերը և այն նախադրյալները, որոնք նպաստեցին այդ երկրում արտաքին ուժերի՝ մասնավորապես Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ներթափանցման ակտիվացմանը:

Ռուսաստանի քաղաքականությունն Իրանի նկատմամբ ընդհանուր առմամբ պայմանավորված էր նաև XIX դ. երկրորդ կեսին կայսրության ներսում անց կացվող տնտեսության արդիականցման քաղաքականությամբ, որի գաղափարական հիմքը նոր սպառողական և հումքային շուկաների նվաճումն էր: Ռուսական կառավարության անմիջական հովանավորությամբ և վերահսկողությամբ մշակված ռազմավարության մեջ կարևորագույն դերը վերապահված էր իրանական տնտեսության ենթակառուցվածքներում ներդրումների, արտաքին փոխառությունների, մենաշնորհային, մաքսային, հարկային պայմանագրերի միջոցով շարունակական ներթափանցման

հայեցակարգին: Ռուսական իշխանությունների կողմից այն դիտվում էր որպես Իրանի հետ առևտրատնտեսական հարաբերություններն ընդլայնելու և Մեծ Բրիտանիային հակազդելու ամենարդյունավետ միջոց: 1883 թ. Ռուսաստանը փակեց անդրկովկասյան տարանցիկ առևտրական ուղին՝ ծանր հարված հասցնելով Իրանում արևմտաեվրոպական առևտրին: 1880-ական թթ. մինչև 1910 թ., Ռուսաստանն արհեստականորեն խոչընդոտում էր Իրանում երկաթուղաշինության գործընթացը: Նման քաղաքականությունը միտված էր ամրապղծելու հյուսիսիրանական շրջաններում ձեռք բերված մենաշնորհային դիրքը: Հատուկ ֆինանսատնտեսական քաղաքականության շնորհիվ, մասնավորապես իրանական կառավարությանը տրամադրվող արտաքին խոշոր փոխառությունների միջոցով, Ռուսաստանին հաջողվեց քաղաքական գերակայություն հաստատել դաջարական արքունիքում: Ենթագլխում առանձին ներկայացված են ռուս-իրանական սպրանքաշրջանառությունը և առևտրական հաշվեկշիռը, որը համարվել է աշխատանքի «Հավելված» բաժնում զետեղված աղյուսակներով:

**«Պարսկական կազակական բրիգադը որպես Ռուսական կայսրության քաղաքական ազդեցության լծակ Իրանում»** վերնագրով երրորդ ենթագլխում համակողմանի ուսումնասիրության են ենթարկվել Իրանում ռուսական ռազմական առաքելության բարձրատիճան սպայական անձնակազմի ենթակայությանը «Պարսկական կազակական բրիգադ»-ի (ՊԿԲ) կազմավորման գործընթացը և կառույցի քաղաքական դերակատարման հարցերը: 1880-ական թթ. սկսած ՊԿԲ-ը դաջարական բանակի միակ մարտունակ և կանոնակարգված տարրն էր:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«ԻՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՈՌՈՍ-ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1900-1907 ԹԹ.). ԴԻՍԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՈՒՆՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ»** և բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ **«Պարսից ծոցի գործոնը Ռուսական կայսրության և Մեծ Բրիտանիայի հարաբերություններում. իրանական խնդրի հանգուցալուծման նախադրյալները»** ենթագլխում համակողմանի քննարկվել են Պարսից ծոցի հիմնախնդրի շուրջ երկու երկրների միջև հակասությունները, հակազդեցության խորացման, նպատակների անհամատեղելիության պատճառները, ռուսական դիվանագիտության ռազմավարությունը:

XIX դ. 90-ական թթ. Ռուսաստանը Պարսից ծոց ներթափանցելու գործնական քայլեր սկսեց՝ իր դիրքերն ամրակայելու միջոցներից կարևորելով առևտուրը, նավագնացությունը, ռազմածովային հենակետի և նոր հյուպատոսությունների հիմնումը: Առաջնահերթություն էր դիտվում նաև սպագայում, Անդրիրանական երկաթգծի տարբերակով, դեպի վերոնշյալ շրջաններ «կոմերցիոն էլք» ապահովելու և Կասպից ծովից Պարսից ծոց նավթային խողովակաշարի կառուցման անհրաժեշտությունը: Ռուսաստանի նավթարդյունահանող ընկերությունները հետաքրքրված էին Հնդկաստան և մերձավորարևելյան երկրներ նավթ արտահանելու հեռանկարով: Նպատակ ունենալով սահմանափակել ռուսական հավակնությունները՝ Մեծ Բրիտանիան, դեռևս 1898 թ., ռուսական կառավարությանն առաջարկում էր Կ.Պոլսից մինչև Պեկին ազդեցության գոտիների բաժանման ընդհանուր համաձայնագիր կնքել: Այս համատեքստում իրատեսական էր համարվում Մյջին Արևելքը,

մասնավորապես Իրանը, ազդեցության գոտիների բաժանելու փոխզիջումային տարբերակը, որով Իրանի հյուսիսային շրջանները կլինեին ռուսական ազդեցության ոլորտում, իսկ հարավայինը՝ բացառապես բրիտանական: Սակայն մինչև 1905 թ. Ռուսական կայսրության քաղաքական նպատակներն Իրանում դրսևորվում էին հստակ ձևաչափով. «Պահպանել Պարսկաստանի ամբողջականության և անձեռնմխելիության սկզբունքը, չհավակնել տարածքային նոր ձեռքբերումների, թույլ չտալ որևիցե երրորդ պետության գերակայությունն այստեղ, աստիճանաբար ենթարկելով այն ռուսական ազդեցությանը: Առանց խափանելու այդ երկրի ինչպես արտաքին ինքնուրույնության սկզբունքները այնպես էլ ներքին կարգը՝ Ռուսաստանի հիմնական խնդիրն է նրան դարձնել հնազանդ և օգտակար: Այլ կերպ ասած՝ հզոր գործիք մեր (Ռուսաստանի Ն.Ն.) ձեռքերում՝ պարսկական լայնածավալ շուկան պահպանելու և ընդլայնելու նպատակով»:

1902 թ. Մեծ Բրիտանիան դարձավ ճապոնիայի դաշնակիցը և սկսեց բարելավել իր հարաբերությունները Ֆրանսիայի հետ: 1902 թ. հունվարի 30-ին ստորագրվեց անգլո-ճապոնական պայմանագիրը, որն ուղղված էր Ասիայում ռուսական ծավալման դեմ: Առաջին հայացքից կենտրոնացած լինելով Հեռավոր Արևելքի վրա, այդ պայմանագիրն իր մեջ ներառում էր Միջին Արևելքի հետ կապված շատ խորքային հարցեր: 1905 թ. հետո իրանական խնդրում Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև փոխադրած համաձայնության գալու միանգամայն այլ նախադրյալներ ձևավորվեցին: Կայսրությունում բռնկված հեղափոխությունը և ռուս-ճապոնական պատերազմում (1904-1905 թթ.) կրած ծանր պարտությունը խորացրեց Ռուսաստանի տնտեսական ճգնաժամը և հանգեցրեց միջազգային կշռի շեշտակի անկմանը: Արդյունքում, 1906 թ. Ռուսաստանի իրանական քաղաքականության առանցքային ծրագրերում առաջնահերթություն դարձավ նախկինում ձեռքբերվածը պահպանելու խնդիրը:

**«Իրանը 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրում և Ռուսական կայսրության իրանական քաղաքականության նոր ուղեգծի ձևավորումը»** վերնագրով ենթագլխում համապարփակ քննարկվել է 1907 թ. օգոստոսի 31-ին կնքված «Միջին Արևելքը ազդեցության գոտիների բաժանելու անգլո-ռուսական համաձայնագրի» իրանական գործոնի առանցքային նշանակությունը:

Իրանում Մեծ Բրիտանիայի հետ համագործակցության հաստատմանն ու ազդեցության ոլորտների հստակեցմանը նպաստեցին Գերմանիայի աճող ներգրավածությունը տարածաշրջանում, հատկապես Բաղդադի երկաթուղու միջոցով Իրան ներթափանցելու գերմանական ծրագրերը, որին գումարվեց Իրանում ծավալվող Սահմանադրական հեղափոխությունը: 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը սահմանագիծ դարձավ միջազգային հարաբերություններում: Համաձայնագիրը Ռուսաստանին հնարավորություն կտար ժամանակավորապես ձեռնպահ մնալ ակտիվ արտաքին քաղաքականությունից և ուշադրությունը կենտրոնացնել ներքաղաքական ճգնաժամի, սեփական ռազմական և տնտեսական ներուժը համախմբելու հիմնահարցերին: Աշխարհաքաղաքական հեռանկարում Ռուսաստանը նպատակ ուներ համաձայնագիրը ծառայեցնել պատմական խնդիրների իրագործմանը՝ Բալկանների և սևծովյան նեղուցների հարցերն ի օգուտ իրեն լուծելու համար: Պատահական չէ, որ Իրանի շուրջ բանակցային գործընթացը խթանելու նպատակով Լոնդոնն ընդլայնեց քննարկվող հարցերի շրջանակը՝ ներառելով Նեղուցների կարգավիճակի փոփոխման խնդիրը, որը թեև

չամարագրվեց համաձայնագրում, սակայն էապես բեկեց Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը: Դիվանագիտական կանխավճարի գնալով Նեդուցների հիմնախնդրում՝ Մեծ Բրիտանիան ակնկալում էր Ռուսաստանից համապատասխան զիջումներ ստանալ Իրանում, մասնավորապես հարավ-արևելյան և Պարսից ծոցի, իսկ հետագայում մասնավորապես կենտրոնական շրջաններում: Համաձայնագրով Իրանը բաժանվեց ազդեցության երեք ոլորտների՝ հյուսիսային՝ ռուսական, հարավային կամ հարավ-արևելյան՝ անգլիական և չեզոք գոտիների: Համաձայնագրի հորվածները ըստ էության արտացոլում էին Իրանում այդ տերությունների միջև լարված մրցապայքարի արդյունքում ձեռք բերված ուժային իրական հարաբերակցությունը: Ենթազվիտում մասնաձևան վերլուծվել են համաձայնագրի առանցքային դրույթները և կողմերի ստանձնած պարտավորությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «**ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ 1905-1911 ԹԹ. ԻՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՂՐԱԿԱՆ ՀՔԱՎՓՈՒՈՒԹՅԱՆԸ**» և կազմված է երեք ենթագլխից:

«**Իրանում Սահմանադրական շարժման ծավալումը և Ռուսաստանի որդեգրած դիրքորոշումը**» ենթագլխում ներկայացվում են Իրանում 1905 թ. Սահմանդրական հեղափոխության ներքին և արտաքին մախաղայները, շարժման հիմնական փուլերը և ստեղծված ներքաղաքական նոր իրադրության նկատմամբ Ռուսաստանի քայլերը: 1906 թ. երկրում ծավալված հասարակական շարժման արդյունքում Իրանում հաստատվեցին սահմանադրական կարգեր և հիմնվեց ազգային ժողով (մեջլիս), որով Իրանը բացարձակ միապետությունից վերածվեց սահմանադրական միապետության: 1907 թ. ռուսամետ Մոհամմադ Ալի շահի գահ բարձրանալուց հետո Իրանի զարգացումը խաղաղ չընթացավ: Շահի հակասահմանդրական դիրքորոշումը հանգեցրեց նրա և հեղափոխական ուժերի միջև երկար և անզիջում պայքարի: 1908 թ. հունիսին շահը ՊԿԲ-ի անմիջական մասնակցությամբ պետական հեղաշրջում իրակցրեց և ցրեց մեջլիսը, որից հետո հեղափոխական շարժումը տեղափոխվեց երկրի հյուսիսային շրջաններ, մասնավորապես Ատրպատական և Գիլյան: Կարծելով որ գործընկերային հարթության վրա դրված ռուս-անգլիական հարաբերությունները թույլ կտան կարգավորել ներիրանական ճգնաժամը և պահպանել ռուսական ազդեցությունը դաջարական արքունիքում՝ Ռուսաստանը սկզբում անիրատես մտուցում ցուցաբերեց հեղափոխության ընթացքի նկատմամբ: Սակայն նյութական վնասներից զատ՝ իրանական հեղափոխությունն օրակարգային դարձրեց ռուսական սահմանների անվտանգության հարցը՝ պայմանավորված Ատրպատականի նկատմամբ թուրքական զավթողական ծրագրերով, որին գումարվեց Իրանի հյուսիսային շրջաններ ներթափանցած կովկասյան հեղափոխական ուժերի անջատողական գործունեության խնդիրը: Գիտակցելով քաղաքական պահի լրջությունը, նոր մարտահրավերներին դիմակայելու, մասնավորապես Իրանում ձևավորված անկայուն քաղաքական իրավիճակը վերահսկելու նպատակով՝ 1909 թ. Ռուսաստանը ձեռնարկեց Իրան ռազմական ներխուժման առաջին փուլը:

«**Նոր զարգացումներ ռուս-իրանական հարաբերություններում և ռուսական գործերի կողմից հյուսիսային Իրանի վերջնական ռազմակալումը**» ենթագլխում քննարկվում են այն խնդիրները, որոնք ի հայտ եկան ռուս-իրանական հարաբերություններում 1909 թ. սահմանդրական կառավարության



իշխանության գալուց հետո: Լուսաբանվում են իրանական ճգնաժամի կարգավորման շուրջ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ձևավորված իրարամերժ մոտեցումները:

Շահական վարչակարգին ընդդիմադիր ուժերի և պահպանողական ճամբարի միջև խորացող հակամարտության արդյունքում՝ Իրանը կրկին կանգնեց իշխանափոխության փաստի առաջ, և ներիրանական ճգնաժամի կարգավորման հարցում Պետերբուրգն ու Լոնդոնը հայտնվեցին հակադարձ բևեռներում: Սահմանադրական իշխանությունների առավել ծայրահեղ շրջանակները, հիմնավորելով երկրում մաքսային, ֆինանսական և ռազմական բարենորոգումների անհրաժեշտությունը, նախատեսում էին դրանք իրականացնել օտարերկրյա, սակայն սկզբունքորեն ոչ ռուս մասնագետների օժանդակությամբ: Առաջնային կարևորություն ստացավ Իրանից ռուսական զորքերի տարիանումն ու ռուսական ազդեցության սահմանափակումը՝ որպես ճգնաժամի կարգավորման նախադրյալ: Իրանական նոր վարչակազմի բացահայտ հակառուսական գործունեության կազմակերպող ուժ գնահատելով Մեծ Բրիտանիային՝ Ռուսաստանը կտրուկ փոխեց իր մարտավարությունը: Լոնդոնի քայլերին հակակշռելու և իր նախկին ազդեցությունն Իրանում վերականգնելու նպատակով 1911 թ. օգոստոսին ռուսական կառավարությունը լիազարկեց նախկին շահ՝ Մոհամմադ Ալիին կրկին իշխանության վերադարձնելու հաղթաբարձրք, իսկ 1911 թ. դեկտեմբերին իրականցրեց երկրորդ լայնածավալ ռազմական ներխուժումն Իրան: Յարական կառավարության մարտավարությունը փորձ էր՝ ստիպել Թեհրանին երկուստեք հավասարակշռել քաղաքականությունը և հաշվի գտնել նաև ռուսական շահերի հետ: Այն նպատակ ուներ նաև վերջնականապես ճնշել հեղափոխական օջախները: 1912 թ. մարտին իրանական կառավարությունը, ռուս-անգլիական համատեղ փոխառության դիմաց, պաշտոնապես համաձայեցրեց իր քաղաքականությունը և՛ Մեծ Բրիտանիայի և՛ Ռուսաստանի շահերի հետ՝ փաստացի ճանաչելով Իրանն այդ երկու երկրների միջև ազդեցության դորտների բաժանելու մասին 1907 թ. կնքված համաձայնագիրը: Առաջին Աշխարհամարտի ընթացքում պատերազմող երկու կողմերի՝ Եռյակ համաձայնության և Եռյակ դաշինքի երկրների համար այդ պետության աշխարհաքաղաքական դերակատարումը և նավթային հարուստ պաշարներով ընդերքը էլ ավելի կարևորվեց: Իրանի տարածքը ռազմակալած բրիտանական և հատկապես, ռուսական զորքերը մինչև Առաջին աշխարհամարտ և պատերազմի ընթացքում դուրս չբերվեցին՝ չմայած պատերազմում Իրանի կողմից հայտարարված չեզոքությունը: 1915 թ. մարտին Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը վերանայեցին 1907 թ. համաձայնագիրը և ձեռք բերված համաձայնությամբ՝ չեզոք գոտին՝ բացառությամբ Սպահան և Յազդ քաղաքների, ևս ընդգրկվեց բրիտանական ազդեցության գոտում: Փոխարենը՝ Ռուսաստանին, պատերազմի բարեհաջող ավարտից հետո, իրավունք էր տրվելու իր վերահսկողությունը սահմանել սևվճովյան նեղուցների վրա, սակայն Ռուսական կայսրության «պատմական» ծրագրերին վիճակված չէր իրականություն դառնալ:

**«Ռուսաստանի դիրքորոշումն Իրանի Սահմանադրական հեղափոխությանը հայերի մասնակցության հարցի նկատմամբ»** ենթագլխում փորձ է արվել ներկայացնել Իրանի Սահմանադրական հեղափոխությանը հայերի մասնակցության պատճառներն ու հետևանքները, վերլուծել հայ

քաղաքական ուժերի և առանձին գործիչների կարևոր դերակատարումն Իրանում սահմանադրական կարգերի հաստատման գործում:

Մինչև Սահմանադրական հեղափոխությունը հայերը չէին միջամտում Իրանի ներքաղաքական խնդիրներին: Նրանց գործունեությունն Իրանում նպատակաուղղված էր Օսմանյան կայսրության հայկական շրջաններում ազգային ազատագրական պայքարի կազմակերպմանը և իրանահայ համայնքի կրթական, հասարակական խնդիրների համակարգմանը: Անդրկովկասը համակած սոցիալիստական գաղափարախոսությունը XX դարակզբին սկսեց թափանցել Իրան: Հեղափոխության տարիներին Իրանը, հատկապես Ատրպատականը, վերածվեցին այդ գաղափարախոսությամբ տոգորված վերազգային, այդ թվում հայկական, հեղափոխական տարբեր ուժերի համագործակցության ճակատի, որի առաջնային նպատակներից էր Իրանում ռուսական տիրապետության դեմ պայքարը:

Բազմաթիվ աղբյուրներ փաստում են, որ սոցիալ-դեմոկրատական դոկտրիններն Իրանում էապես ձևավորվել են իրանահայ մտավորականների գաղափարական ազդեցությամբ: Հայազգի հեղափոխական գործիչները ներգրավված են եղել իրանական առաջին՝ Դեմոկրատական կուսակցության ձևավորման բոլոր փուլերում և մեծ ներդրում են ունեցել իրանական ազդեցիկ քաղաքական հոսանքների ձևավորման գործում: Անվիճելի փաստ է նաև Իրանում սահմանադրական կարգերի հաստատման գործում Սոցիալ-Դեմոկրատական Հնչյակյան և Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունների մեծ ավանդը: Սակայն Սահմանադրական հեղափոխությանը հայերի մասնակցությունը պայմանավորված չէր միայն սոցիալիստական գաղափարախոսությամբ հավատարիմ մնալու ձգտումով: Այդ մասնակցությունը կարևորվում էր նախ և առաջ իրանահայ քաղաքացու սահմանադրական իրավունքի հաստատման տեսանկյունից: Կային նաև մի շարք արտաքին գործոններ. 1905-1909 թթ. Իրանի հյուսիսում թուրքական զավթողական քաղաքականությանը գոհ դարձած իրանահայության ինքնապաշտպանության կազմակերպումն էր: Կարևոր դրոշապատճառներից էր նաև Անդրկովկասում ցարական կառավարության հայկական կուսակցությունների վերահսկման փորձերը, ինչպես նաև հայկական ինքնության կերպափոխմանը միտված քայլերը: Դարակզբին ռուսական կառավարությունը հայկական դպրոցները, բարեգործական միությունները փակելու և հայ եկեղեցու կալվածքներն ու գույքը բռնագրավելու քայլեր իրականացրեց: 1905-1906 թթ. հայերն Անդրկովկասում բախվեցին ռուսական վարչակազմի բացահայտ հայահալած քաղաքականությամբ: Արդյունքում, Սահմանադրական շարժմանը զինվորագրված հայ հեղափոխականները ցարիզմի և օսմանյան բռնարարքների դեմ պայքար ծավալեցին իրանական ճակատում: Ռուսական կառավարության համար բոլորովին անընդունելի էր թե՛ իրանահայ, թե՛ ռուսահպատակ հայ հեղափոխականների գործունեությունը: Սահմանադրական շարժման ծավալմանը զուգընթաց ցարական վարչակարգը սկսեց քայլեր ձեռնարկել՝ կանխելու նրանց հակացարական քարոզչությունը և ռազմական ներգրավվածությունը շարժման մեջ:

**Եզրակացության** մեջ ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, արվում եզրակացություններ:

Ուսումնասիրելով XIX դարավերջին XX դարասկզբին Ռուսական կայսրության Իրանի նկատմամբ իրականացվող քաղաքականության շարժառիթներն, օրինաչափություններն ու շրջափուլերը՝ հանգել ենք հետևյալ հիմնական եզրահանգումներին.

1. XIX դարավերջին Իրանում Ռուսաստանի քաղաքականությունը հիմնականում պայմանավորված էր տարածաշրջանում գերակայություն հաստատելու ձգտումով, ինչը Մեծ Բրիտանիայի հետ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի բախման կարևոր պատճառներից էր:
2. Ռուսաստանի տնտեսական և քաղաքական շահերից էր բխում Իրանի ամբողջականության պահպանումը: Տնտեսապես և ռազմական առումով թույլ Իրանը վերածվեց միջանկյալ գոտու՝ նվազեցնելով շփման եզրերը ու տարծքային սահմանակցությունը բրիտանական Հնդկաստանի, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Ռուսաստանին ձեռնտու էր ունենալ կախյալ վիճակում հարակից պետություն: Ակտիվացնելով իր ռազմաքաղաքական և տնտեսական ներկայությունն Իրանում՝ Ռուսաստանը հնարավորություն ստացավ իր համար նպաստավոր հունով ուղղորդել իրանական կառավարող վերնախավի քաղաքականությունը:
3. Ռուսաստանն Իրանը դիտարկում էր որպես ապրանքահումքային կցորդ: Իրանի նկատմամբ նրա ֆինանսատնտեսական քաղաքականությունն ուներ որոշակի սկզբունքայնություն. մասնավոր կապիտալի թույլ զարգացվածության պատճառով ինչպես առևտրում, այնպես էլ կապիտալների արտահանման բնագավառում գլխավոր դերակատարը պետությունն էր: Հատկանշական է, որ կայսրության տնտեսական ներթափանցումն ակտիվացնելու հարցում մեծ կարևորություն էր տրվում հայ առևտրաարդյունաբերական ներուժին: Թեև Իրանի նկատմամբ Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի կենսագործած քաղաքականությունները՝ ներթափանցման ռազմավարությունների առումով եակամորեն տարբեր էին, այսուհանդերձ Ռուսաստանին հաջողվեց այդ մրցակցության առաջին փուլում քաղաքական և տնտեսական տիրապետություն հաստատել Իրանում և գործնականում վերահսկողության տակ առնել իրանական տնտեսության մի շարք ոլորտներ:
4. Խոշոր փոխառություններ տրամադրելով դաջարական կառավարությանը՝ Ռուսաստանն ամբողջական ֆինանսական կախվածության մեջ դրեց շահական վերնախավին, որն աստիճանաբար կորցրեց ինքնուրույն քաղաքական որոշումներ կայացնելու հնարավորությունը և փորձում էր իշխանությունը պահել՝ խուսանավելով ռուս-անգլիական մրցակցության միջև: Իրանը, պահպանելով դե-յուրե անկախությունը, դե-ֆակտո վերածվեց կիսանկախ պետության:
5. Ռուսաստանն ի դեմս Պարսկական Կազակական բրիգադի (ՊԿԲ) Իրանում ձեռք բերեց շահի և իշխող վերնախավի նկատմամբ քաղաքական ազդեցության կարևոր լծակներ: Այն կոչված էր պահպանել դաջարական գահի իրավահաջորդության սկզբունքն ու անձեռնմխելիությունը: Նման մոտեցումը պայմանավորված էր բրիտանացիների կողմից պարբերաբար խրախուսվող գահի հավակնորդ արքայադուհուհի այլ ներկայացուցիչների կենտրոնախույս ձգտումներով: ՊԿԲ-ի առաջնային խնդիրներից էր նաև վերահսկողության տակ պահել երկրում ծավալվող ներքաղաքական գործընթացները և ապահովել Իրանում Ռուսաստանի ստատուս-քվոն: Իր գործունեության ընթացքում ՊԿԲ-ը Իրանում ստեղծեց կայուն հետախուզական ցանց, հաստատում դիրք

գրադեցրեց երկրի ռազմակրթական բնագավառում: Այն գործնականում ռուսական ռազմական կանոնակարգի օրինակով իրանական բանակի համար սպայական կադրեր պատրաստող կառույց էր: Իր հերթին ղազարական քաղաքական վերնախավն օգտագործում էր «կազակական գործուն» Ռուսաստանից փչյուններ ստանալու համար՝ հստակ գիտակցելով, որ օտարերկրյա հրահանգիչներ հրավիրելու յուրաքանչյուր փորձ բախվելու էր ռուսական հակազդեցությանը:

6. Ներդրումների պետական բնույթը, ինչպես նաև շահական կառավարությանը սատարելու սկզբունքը բարդ երկընտրանքի առաջ կանգնեցրեցին ռուսական կառավարությանը, որն իր քաղաքական նպատակների կենսագործման համար ստիպված էր հետևողականորեն պահպանել կազմալուծվող ղազարական վարչակարգը, քանզի վերջինիս անկումը սպառնալիքի տակ էր դնում ռուսական շահերը:

7. 1905 թ. հետո Ռուսական կայսրությունը հայտնվելով տնտեսական ճգնաժամի մեջ սկսեց իրատեսական համարել Իրանում Մեծ Բրիտանիայի հետ փոխգիջումային մոտեցումների մշակման ու Իրանում ազդեցության ոլորտների հստակեցման անհրաժեշտությունը: Բանակցային գործընթացում նախատեսվում էր, որ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև կազմագործակցության եզրեր կմշակվեն ծավալվող իրանական հեղափոխության կանխարգելման գործում, սակայն Իրանի ներքին խնդիրների չմիջամտելու համաձայնագրի առանցքային դրույթով Մեծ Բրիտանիան հնարավորություն ստացավ հեղափոխական զարգացումները շեղել իր հետաքրքրությունների ուղեծիր՝ սահմանափակելով շահական արքունիքում Ռուսաստանի ազդեցությունը:

8. 1909 թ. ապրիլին Ռուսաստանը կազմակերպեց առաջին ռազմական ներխուժումն Իրան՝ իր ազդեցության գոտում հեղափոխական խլրտումները ճնշելու նպատակով: Ռուսական ռազմական ներկայությունն Իրանում նպատակ ուներ նաև խափանել Ատրպատականի զավթման թուրք-գերմանական ծրագրերը: Ատրպատականն սպազայում կարող էր օգտագործվել որպես ռազմական հենակետ՝ Ռուսաստանի վրա հարձակվելու համար: Միջամտության կարևոր պատճառներից էր վերահսկողությունից դուրս եկած կովկասյան հեղափոխական, այդ թվում հայկական, ուժերի մասնակցությունն Իրանի Սահմանադրական հեղափոխությանը, որը ցարական կառավարությունը դիտում էր, որպես իր երկրի հեղափոխական գործընթացների շարունակություն:

9. Ռուսական առաջին ռազմական ներխուժման արդյունքում թեև հյուսիսիրանական շրջաններում հաստատվեց մասնակի անվտանգության գոտի, սակայն այն էապես չկարողացավ ազդել Թեհրանում ձևավորված իրավիճակի վրա, ինչն ակներև դարձրեց հեղափոխության ընթացքի նկատմամբ Ռուսաստանի անիրատես գնահատականները: Իրանն ամբողջովին կարող էր վերածվել բրիտանական շահերի «մենաշնորհի»: Իրողություն, որը ձեռնտու չէր Ռուսաստանին:

10. 1911 թ. վերջին իրանական ճգնաժամը դարձավ այն թույլ օղակը, որը կարող էր հանգեցնել Լոնդոնի և Ս. Պետերբուրգի աշխարհաքաղաքական ծրագրերի փլուզմանը: Մեծ հաշվով իրանական խնդիրը դիտարկվում էր համանվրոպական քաղաքականության համատեքստում, ուստի երկու տերությունների դիրքորոշումներում սկսեցին նկատվել փոխգիջումային

միտումներ: Ռուսաստանն օգտագործելով Մեծ Բրիտանիայի հետ եվրոպական հարցերում համագործակցության կարևորության գործոնը՝ կարողացավ ապահովել Իրանում ռազմական երկրորդ ներխուժման նկատմամբ քրիտանական վարչակազմի լուր համաձայնությունը և 1911 թ. դեկտեմբերին վերջնականապես ռազմակալեց Իրանի հյուսիսային շրջանները:

**11.** Առաջին աշխարհամարտի նախաշեմին Իրանում ռուս-անգլիական մրցակցությունը չմեղմացավ: Իրանական վարչակարգի նկատմամբ շարունակվեց կիրառվել սպառնալիքների և ճնշումների քաղաքականությունը՝ տարատեսակ պայմանագրերի, մենաշնորհային իրավունքների ձեռքբերման նպատակով: Ռուսական իշխանությունները հյուսիսում խթանեցին հողատարածքների մասսայական ձեռք բերման գործընթացը՝ խրախուսելով սահմանակից մահանգներում ռուսահպատակների վերաբնակեցումը, ինչը այդ տարածքի տնտեսական և քաղաքական յուրացման նպատակ էր հետապնդում և հյուսիսիրանական շրջանների էթնիկ դիմագիծը փոխելու հստակ քաղաքականություն էր:

**12.** Սահմանադրական հեղափոխության ծավալմանը զուգընթաց Ռուսաստանը փոխեց իր դիրքորոշումն Իրանում հայերի նկատմամբ: Շահարկելով հեղափոխությանը զինվորագրված հայ հեղափոխականների ակտիվությունը՝ ցարական վարչակազմը շատ հաճախ ուղղակի անտարբերության էր մատնում ինչպես թուրքերի ու քրդերի, այնպես էլ շահսենների, ու դարադադցիների կիսաքոչվոր ցեղերի կրոնական թիրախ դարձած իրանահայությանը՝ սահմանափակվելով իրանական կառավարությունից ռուսահպատակ հայերի ունեցվածքին հասցված վնասների փոխհատուցումները ստանալով:

## **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԻՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

1. Անգլո-ռուսական գործոնը և Իրանի տնտեսական ճգնաժամն Առաջին աշխարհամարտից առաջ, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2006, էջ 115-119:

2. Իրանում երկաթուղային շինարարության հարցի շուրջ (XIX դարի վերջ- XX դարի սկիզբ), Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2007, էջ 92-97:

3. Պարսկական կազակական բրիգադը որպես ցարական Ռուսաստանի քաղաքական ազդեցության լծակ դաջարական Իրանում, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2008, էջ 123-130:

4. Պարսից ծոցի գործոնը 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրի բանակցային գործընթացի համատեքստում, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Երևան, 2009, էջ 201-211:

5. 1905-1911 թթ. Իրանի Սահմանադրական շարժմանը հայերի մասնակցության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXVIII, 2011, էջ 112-139:

## НАЗЕЛИ НАВАСАРДЯН СЕРЖИКОВНА

### ПОЛИТИКА РОССИИ В ИРАНЕ (КОНЕЦ XIX – НАЧАЛО XX вв.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-“Всемирная история”.

Защита состоится 25-го июня 2013 г., в 15.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

#### РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению комплекса вопросов, связанных с политикой Российской империи в Персии на рубеже XIX - XX вв. Всестороннее исследование темы имеет как научное значение, так и политическую актуальность. Данная проблематика важна не только с точки зрения выявления внешнеполитических задач России и тщательного освещения вопросов, связанных с политическими и экономическими аспектами русско-персидских отношений в исследуемый период, но и в контексте более глубокого восприятия и оценки современных геополитических тенденций. Актуальность темы обусловлена нарастающей реальной международной обстановкой в средневосточном регионе, где Россия по-прежнему заинтересована в завоевании твердых позиций. Укрепление русско-иранских политических и экономических отношений в настоящее время диктует необходимость рассмотрения предшествующего опыта отношений этих стран.

Целью научной работы является всестороннее исследование внешней политики России по отношению к Персии в конце XIX - начале XX вв. и анализа стратегии, основных тенденций, процесса формирования и осуществления этого политического курса.

Отдельные аспекты данной диссертационной работы освещались в советской и зарубежной историографии, однако значительная часть этих работ идеологизированы и тенденциозны. Перед исследователями ставится задача пересмотра старых концепций, с применением более обширного материала. По содержанию и структуре данная работа является комплексным исследованием и затрагивает обширный круг проблем, связанных с политикой России в Персии в рассматриваемый период.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы, а также приложения.

Во **введении** обосновывается актуальность выбора темы, определяются цели и задачи исследования, разъясняется научная новизна, подчеркиваются методологическая основа и практическое значение работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации, озаглавленная **“Стратегические, политические и экономические интересы Российской империи в Иране”** состоит из трех параграфов. Здесь детально рассматривается процесс упрочнения экономических и политических позиций России в Иране, основной целью которой являлось противостояние Великобритании. В первом параграфе - **“Формирование русско-**

*иранской границы и роль Ирана в средневосточной политике России*”, кратко представлен процесс формирования русско-иранской границы на протяжении XIX в., в частности, освещается геополитическая и стратегическая роль Ирана, как “срединного” (буферного) государства на подступах Британской Индии и Османской Турции. Анализируется значение наступательной политики России в среднеазиатском направлении, представляются основные аспекты столкновения англо-русских интересов в регионе.

Во втором параграфе - *“Торгово-экономические интересы России в Иране”* рассматривается социально-политическая ситуация в Иране, предпосылки, в результате которых усилилась борьба между Россией и Великобританией. Дается обзор результатов проводимой финансово-экономической политики царского правительства в Иране, имеющей целью занятия доминирующих геополитических и геоэкономических позиций в этой стране.

В третьем параграфе, озаглавленном *“Персидская казачья бригада, как рычаг политического влияния Российской империи в Иране”*, подробно рассматривается процесс становления и деятельность Персидской казачьей бригады, как действенного проводника российской политики в Иране.

Вторая глава диссертации - **“Иранский вопрос в англо-русских отношениях (1900 - 1907 гг.): от противостояния к компромиссу”**, состоит из двух параграфов. В первом параграфе *“Фактор Персидского залива в отношениях Российской империи и Великобритании. Предпосылки решения иранского вопроса”* обстоятельно рассматриваются цели России, и ее политика по отношению к Персидскому заливу. С занятием важных политических и экономических позиций в северных областях Ирана, Россия с 90-ых гг. XIX в. начала активное продвижение на юг, в направлении Персидского залива. На этой почве англо-русские противоречия усилились. Великобритания на протяжении долгого времени пыталась достигнуть соглашения с Россией по разграничению сфер влияний в Средней Азии и, в частности, в Иране, ставя задачу укрепления своего абсолютного господства в южных районах Ирана.

Во втором параграфе данной главы - *“Иран в англо-русском соглашении 1907 г. и формирование нового направления иранской политики Российской империи”* рассматривается иранский фактор в англо-русском соглашении 1907 г., процесс трансформации позиций обеих держав и формирование нового согласованного политического курса по иранскому вопросу. После поражения в русско-японской войне (1904 - 1905 гг.) Россия, испытывая экономические и внутривнутриполитические трудности, подвергла свою внешнюю политику значительным изменениям. Пересмотрев приоритеты, Россия изменила свою политику и по отношению к Ирану, поскольку уже не обладала достаточными ресурсами для “распространения своего влияния на всю Персию”. В соответствии с новыми геополитическими изменениями, в российских политических кругах стала рассматриваться возможность осуществления взаимоприемлемого политического курса с Великобританией в Иране. Активное продвижение Германии на Восток и начавшаяся Иранская конституционная революция стали дополнительным толчком на пути к англо-русскому сближению.

Третья глава диссертации **“Военно-политическое вмешательство России в Иранскую конституционную революцию 1905 - 1911 гг.”**, также состоит из трех



параграфов. В первом параграфе - *"Распространение конституционного движения в Иране и позиция России"* представлены основные этапы роста революционного движения в Иране, ее внутренние и внешние предпосылки. Благодаря принципу о невмешательстве во внутренние дела Ирана, который лежал в основе англо-русского соглашения, Лондон получил возможность использовать естественный ход революционных событий в Иране для смены власти. В результате развивающегося революционного движения, Россия потеряла свое привилегированное положение при дворе шаха. Кроме материальных потерь, иранская революция поставила на повестку дня безопасность южных рубежей империи (связанной с наступательной политикой Османской империи в северном Иране) и вопрос кавказских антиправительственных революционеров, участвовавших в революционных событиях Персии. Неконтролируемая ситуация в Иране вынудила российское правительство решать вопрос о своем участии в персидских делах путем военного вмешательства.

Во второй параграфе, именуемом *"Новые развития в русско-иранских отношениях и окончательная оккупация русскими войсками Северного Ирана"* тщательно анализируются проблемы, возникшие в русско-иранских отношениях с приходом к власти пробританского правительства и формированием в Меджлисе антирусского левого блока. Последний ставил политическую задачу окончательного вывода русских войск с иранской территории и проведение системных реформ при посредстве иностранных (но принципиально не русских) советников, что еще более усугубило положение России в Иране. В итоге, Россия предприняла второе крупномасштабное военное вторжение в Иран. Заняв стратегически важные территории северных областей, она организовала военно-полевые суды и учинила жестокую расправу над революционными очагами. В параграфе разносторонне и обстоятельно выявляются различия позиций Великобритании и России по урегулированию иранского кризиса. Особое внимание уделено анализу ситуации вокруг Ирана до и в годы Первой мировой войны.

В последнем параграфе, озаглавленном *"Позиция России в вопросе участия армян в Иранской конституционной революции"*, освещается важная роль армянских политических партий и отдельных деятелей в формировании демократических доктрин и политических течений в Иране, выявляются причины и последствия их участия в иранской революции. Также рассматривается позиция России в отношении армянского участия в иранских революционных процессах. Армяне являлись "полезным проводником русского экономического влияния в Персии и посредником в торговле", однако это преимущественно касалось торгово-предпринимательских слоев армянского общества. Царское правительство не упустило из виду усилия как русскоподанных, так и персидскоподанных армянских революционеров в политизации иранского общества и их вклад в революцию. По определению российского внешнеполитического ведомства армянская агитация, проникающая в Персию из русских пределов, нуждалась в установлении более широкого наблюдения. Она "основывалась на политических мечтаниях и представляла невыгоды и опасность", выявлялась в крайне враждебной форме для России. Посему, неслучайно, что русским консульским

учреждениям зачастую предписывалось держать под особым контролем армянских революционных деятелей.

В заключении обобщаются основные выводы, полученные в ходе подготовки диссертации.

NAZELI NAVASARDYAN

**THE POLICY OF RUSSIA ON IRAN  
(THE END OF THE 19<sup>th</sup> - THE BEGINNING OF THE 20<sup>th</sup> CENTURIES)**

The defense of the dissertation will take place at 15.00, on the 25<sup>nd</sup> of June, 2013 at the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of the NAS RA Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02.

**SUMMARY**

This study investigates a complex of issues on the policy of Russia in Iran at the turn of the 19th and the 20th centuries. A multilateral study of this topic has both scientific value and political actuality. The issue is important not only because it reveals some aspects of Russian foreign policy on Iran at the specified period, it also leads to a better understanding of the currently evolving political situation around Iran. It is noteworthy to point out that Russia is still interested in having a strong position in Iran. Hence, an in-depth analysis of Russian-Persian relations is of utmost importance.

The aim of this study is a many-sided investigation of the foreign policy of Russia on Persia in the end of the 19th - beginning of the 20th centuries, as well as a comprehensive analysis of the strategy, main trends, the process of formation and implementation of the chosen political course.

Some aspects of this thesis has been previously discussed in both Soviet and Western historiographies; however they were mostly ideologized. That is why one of the aims of this study was to re-evaluate some concepts and views using new materials. The study appears to be a complex investigation which overviews a wide range of issues in regards to Russian policy on Persia in the aforementioned period.

The thesis consists of introduction, three chapters, conclusion, list of references, as well as appendix.

In the **Introduction** an actuality of the chosen topic, the aims and purposes of the study are set forth. The scientific originality, the methodological background and the practical significance of the work is outlined. Also a list of used references is briefly reviewed.

The first chapter entitled “*Strategic, politic and economic interests of Russian Empire in Iran*” consists of three paragraphs. Here, the process of strengthening of both economic and politic positions of Russia in Iran is considered in details. In the first paragraph with a title “*A formation of Russian-Iranian border and the role of Iran in the middle-eastern politics of Russia*” a process of formation of Russian-Iranian border during the entire 19th century is briefly discussed. Particularly, the geo-political role of Iran as a “mediate” (a buffer) state in the outskirts of the British India and Ottoman Empire, where Russia, aiming to gain both geo-political and geo-economical positions, served as a guarantee for territorial

integrity and inviolability of the estates of Persian shahs. A significance of Russian offensive policy is the Middle-Asian direction is also discussed here. The main aspects of English-Russian trade interests' confrontation in the region are also discussed in this section.

In the second paragraph called "*The trade and economic interests of Russia in Iran*" the results of an intensive development of Persian market by Russia are discussed. The aftermath of financial and economic politics of Tsar's government is also reviewed.

In the third paragraph "*The Persian Cossack brigade as a key factor of political influence of Russian Empire in Iran*" formation and activity of Persian Cossack brigade as a tool of Russian politics in Iran are introduced in details.

The second chapter of the thesis entitled as "***The Iranian question in English-Russian relations (1900 - 1907): from confrontation to compromise***" consists of two paragraphs. In the first one entitled as "The Persian Gulf factor in the Russian Empire and English relations. Some preconditions directed to a solution of Iranian question" the claims of Russia for Persian Gulf are thoroughly discussed. Beginning from the 1890s when the advancement of Russia towards the Persian Gulf became more crucial, the Great Britain aspired to sign a treaty with Russians in regards to demarcation of the spheres of influence in Iran, aiming to achieve an absolute control over the southern regions of Iran.

In the second paragraph "*Iran in the English-Russian treaty of 1907 and the formation of a new concept of the Iranian policy by Russian Empire*" the Iranian factor on the demarcation of political influence in Middle Asia, as well as the process of positional changes of both states and formation of a new coordinated political course for Iranian question are discussed in the English-Russian treaty of 1907. After the defeat in Russian-Japanese war (1904 - 1905) Russia, experiencing economic and domestic difficulties, drastically changed its foreign policy, in particular, reconsidering its priorities in Iran. A thorough advancement of Germany to the East, as well as the Iranian constitutional revolution made it possible to implement with the Great Britain a mutually beneficial political course in regards to the Iranian question. In prospect, by means of certain concessions in Iran and elaboration of the treaty with the Great Britain, the Russian government has had an aim to restore its former power and return to its active political role.

The third chapter of the thesis "***Military and political interference of Russia in to the Iranian constitutional revolution of 1905 - 1911***" consists of three paragraphs. In the first one "*The spread of constitutional movement in Iran and the Russian attitude*" both internal and external preconditions for the growth of revolutionary movement in Iran are brought together. Given the spread of democratic movement London relied on the natural course of events in Iran in order to change the power in the country, while Russia has lost its privileged position at the shah's court. Apart from economic losses the Iranian revolution had on the agenda the security of southern borders of the Empire, as well as the question of participation of Caucasian revolutionaries in it. The chaotic situation in Iran forced the Russian government to introduce military intervention to the country.

In the second paragraph "*New progresses in Russian-Iranian relations and the final occupation of the Northern Iran by Russian troops*" the problems that rose in the Russian-Iranian relations due to the pro-Britain government, which aimed to withdraw

the Russian troops from Iran and to implement basic reforms with assistance of Western advisors (at any event not Russians) are thoroughly discussed in this section. To secure its interests Russia organized the second large military intervention in Iran. It took the strategic territories in the northern regions and suppressed the revolution. The differences in positions of Great Britain and Russia towards the settlement of the Iranian crisis are both thoroughly considered. A special attention was paid to an analysis of the situation developed around Iran before and then after the World War I.

In the final paragraph "*The position of Russia in regard of participation of Armenians in Iranian constitutional revolution*" an important role of Armenian political parties and certain political leaders in the formation of social-democratic doctrines and ideas in Iran are discussed. Both the reasons and consequences of their involvement in the Iranian revolution, as well as the position of Russia are discussed here too.

In the **Conclusion** the main results of the thesis are summarized.